

Ս Ի Ո Ւ

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1946

« ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԵՐԵՎԱՆ »

6-7



ՆՈՐԻՆ Ս. ՕՉՈՒԹԻՒՆ S. S. ԳԵՂՐԴ Զ.

Ա. ՀԱՅ. ՓՈԽ. ՀԱՅՐԱՊԵՏԱ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅԱՑ

ԽՄԲԱԴՐԱԿԱՆԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

Երջանիկ է Սոււրբ Աթոռոյ Պաշտօնաթերթ Սիոնը, զարդարել կարենաւուն համար իր էջերը պատճէններովը Ամենայն Հայոց Հայրապետի առաջին սրբատառ գոնդակներուն, որոնք Արարատեան աշխարհի հայրենական քաղցրութիւններէն և Ս. Էջմիածնի նուրբական սրբութիւններէն՝ տարիէ մը ի զեր սպասուած և կարօտցուած զգացումներու և կայծերու գեղեցիկ աւաշը կը բերէն մեղի:

Ճշմարիտ Հօր և Բարի Հոգուապետի ձայնն է ան, Լուսաւորչի և իր արժանաւոր յաջորդներու, Ներսէսներու և Սահակներու, մինչև Խրիմեան և Խորէն իրարու յաջորդած Հայրապետներու սրտին տրոփիւնն է որ կը լսուի նորէն՝ անուշ և անպատոր կը ուղիղով, արի հոգիի մը կիսնսնակութեան մէջէն:

Ո՞վ որ կը ճանանայ զինքը, համօրէն Ազգին Վեհի, Հայաստաննեայց Եկեղեցւոյ նորընտիր Քահանայապետը, կարդալով կամ լսելով իր սրտէն ու զրչէն հոսած այդ բարախուն տողերը, պիտի ըսէ մտադիրը. ինքն է, շուրջ քառորդ գարէ ի զեր, Դէորդ Ե.Ի. և Խորէնի կողքին զործող, ազգին ու Եկեղեցին յոյսի և վատի ելեւէջի շրջաններու մէջ շուարի չկիտող, կամքին յարատեւ քաղցրութիւն խառննելու և սրտին խառնիքը անուշ ժպիտի մը ճանանչովը լուսաւորելու զաղոտնիքն ու չնորհքը ունեցող այն ժիր հոգնորականը՝ որ կը խօսի հայրենիքով բախտաւորուած և ի սփիւս ցրուած իր հօտին: Եթէ չկայ այսօր, աւազ՝, իր բնաշխարհիկ սահմաններուն մէջ բնակաւոր արեւմտեան հայութիւնը, Հայաստաննեայց վեց նահանգներուն և Կիլիկիոյ հոծ ընաշխութիւնը, որ իբրև քանակ և որակ միանգամայն, այնքան կարեւոր արժէք մը կը ներկայացնէր. սակայն մեծ է յոյը, ազգին Վեհին, ապագայի նկատմամբ, վասնիք հայուն Աստուածը մկան է հաշտ նայիլ այլնս իր հօտին և հեռու չէ այն օրը՝ երբ մեր կաթողիկոսները պիտի չզրեն այլնս, ուղղունեմք զգատարանդի զաւակունս մեր, նժդինեալս յայլ և այլ սահմանս և ի քաղաքս արտասահմանեան ազգաց ...

Անտարակոյս ուրախ է իր ճայնը, բախտորչ օրերու մէջէն է որ կուզայ միմիթրութեան և հրաւէրի այդ կոչը, ու երջանիկ է Մեծ Հոգուապետը, վասնիքի շուտառվ իր զիրքը պիտի վերադառնան տարագիր բեկորները իր բազմահազար հօտին: Եւ ինչ խրախուսիչ և զօրել է շեշտար երբ կը հրահանգէ իբրև հայր ամեննեցւոն որ ամէն հայ, ինչպէս միշտ, սիրէ Հայաստաննեայց Ս. Եկեղեցին, որ Մայրն է մեր հաւատքին, սիրէ իր նորանորոգ ու պայծառ ապագային զացող հայրենի երկիրը. որ ծնողները կատարեն իրենց պարտականութիւնը քրիստոնէական ողիով, Մայրենի Եկեղեցւոյ, լիզուի, Հայրենիքի և սրբազան ...

աւանդութեանց սիրով դաստիարակելով իրենց զաւակները . որ Հայ ժողովուրդը որքան ատեն շարունակէ իր տարաշմարհիկ կեանքը , զիտնայ բարձր պահել իր Եղմիան անունը , իր ապրած երկրին օրէնքներուն և ընակակից այլ ցեղերուն հանդէա իր քաղաքացիական պարտականութեանց կատարումով . որ չմոռնանք երբեք Ս. Եղմիածինը , ազգային կենդանութեան սիրով , միշտ անանջատ պահելով ինքզինքնիս անկէ՞ իրքէ հարազատ զաւակներ մեր անձկալի մօրմէն , որ մեր Հայրենիքի ընդհանուր այս շրջափոխութեանը մէջ , վստահ ենք թէ պիտի չուշանայ վերապանելու իր դարաւոր խորհուրդին ամբողջ շքեղութիւնը , գառնալու համար Հայոց Հայրենիքին ոչ միայն հրայրքը , պատմական անոր կերպարանքին բիւրեղացումը , այլ և անդրագարձնելու ոգեղէն իրականութեան նոր խոռվքներ , նոր բիւրեղացումներ : Ու վերջապէս , ազգն ամբողջ , աննկատ և ողջամիտ իմաստութիւնն ունենայ խորենելու և ընդունելու թէ մեր ինաւուրց և ցանկալի Հայրենիքը յարութիւն առած է այսօր , ու անտեսական ճարտարագիտական և քաղաքակրթական բազմատեսակ ձեռնարկութիւններով վերականգնած , ի վճակի է ոչ միայն պատսպարելու և կերպակրելու իր ամբողջ բնակիչները , այլ նաև շուտով՝ իր հովանին ներքեւ ընդունելու աշխարհի չորս ծայրերը ցրուած անհայրենիք Հայութիւնը . ու այս ամէնը՝ անհուն ջանքերովը Հայաստանի Խորհրդային ներկայ Կառավարութեան , որ ատո՞ր համար նոյնիսկ , իրաւունքն ունի անխսիր ամենուս սիրոյն , մեծարանքին և երախտավիտութեան :

Հայաստանի իմաստուն վարիչները իրենց հայրենասիրական ու Հայրենապատապան մեն ու սրբազն գործին մէջ զիտցան չմոռնալ Մեծ Պանդուխտ՝ Սփիւրքի Հայութիւնը , որ տակաւին երէկ հայրենի կիզիչ կարօտը իր հոգին խորը , ապազայի անընկճելի հաւատքով Սփիւրքի մշուշներէն կը նայէր այսօրուան Հայոց Հայրենիքին , և որ այսօր՝ այլևս երջանիկ , ճամբայ է ինկած կարաւան առ կարաւան մեր դարաւոր սպասումը պսակելու :

Ամէն Հայու նուիրական պարտքն է կանգ առնել Հայրապետական Կոնդակի բառերուն ամէն մէկն առջեւ յարցանքով եւ երկիւղածութեամբ , իբրեւ անառարկելի իմաստութեան գոհար պատգամմերու առջեւ , որ անկորնչական և սուրբ իրաւունքներու յուշը կ'արթնցնէ մեր մէջ , նոյնատեն նորոգելով մեր սիրտերուն խորը՝ անհրաժարելի պարտականութեանց զգացումը :

Եղմիածին կրօնական նուիրապետութեան մը կեղրոնը չէ միայն , այլ Հայուն հոգեկան Հայրենիքը , սերունդներու մտքին առջև և հոգին մէջ բիւրեղացած և լուսաւորչի կանթեղը , վառարանը Ցեղին իմացական և բարոյական ձգտումներուն , ներշնչարանը իր ազգային իտէալին : Եղմիածին Աթոռ մը չէ միայն այլ Ռդի մը , հոգեկան շէնք մը : Խաղաղութեան դար մը անոր գարձուց իր շքեղ գերը , խաղաղութեան ուրիշ շրջան մը , վստահ ենք ատոր , պիտի ընէ զայն ընդունակ՝ գարձեալ սպասարկելու ցեղային ոգիի անմահ խորհուրդին :

ԽՄԲ.